

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիտ	համար
Տարեկան	12 ֆր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Անկերիկայի	համար
Տարեկան	3 ֆր.
Վեցամսեայ	1.50 »

Մանուցվան տղր սոսս ջին երեսին համար 40 ս իսկ վերջին երեսի համար 20 սակերիս է. երե ֆեկ անկի անգամներու համար 20 ժժ գեղ կըլ լայ:

Վառանջի համար ձեռքէ 10 սակերիս

ՇԱՐՇՈՒՄ

ՄԱՍԻՆ ԱՐԿԱՅԻՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՄԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲՈՒ ԵՒ ՇՄԱԹ ՕՐԵՐԸ

Նախակ և ցրակ զրկէլ իւրազրուքիսն հասցիքն .

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռք (20 ՍԱՆԹԻՄ) (Պուշկարիտի համար ձեռք

(15 ՍԱՆԹԻՄ)

Գրուքիսն ևս չեն տրուիր

ՊՕԼՍԵՅԻ ՀԱՅ ՀԱՐՈՒՍԻ ԿԱՐԾԻՔԸ

Անցեալ օր առիթը ունեցայ անսովելու Պոլսեցի մի հարուստ հայ ընտանիքի երիտասարդ շառաւիղի հետ: Մեր խօսակցութեան նիւթը յեզափոխութիւնն էր. վաղուց զիտէի այդ երիտասարդ պարոնի կարծիքը յեզափոխութեան մասին, բայց գիտամբռ ուղեցի անձամբ տեսնել, և անձամբ համոզուել թէ Պոլսի մասամբ կրթութիւն ստացած հայ հարուստ երիտասարդները ո՞րչափ են տարբերվում իրենց քաւաներէն:

Նոյն երիտասարդի մօտ գըտնվում էր մի ծեր Պոլսեցի նոյնպէս մասամբ կրթված: Իմ դէմ ուրեմն գտնվում էին Պոլսեցի բարեկեցիկ դասի երկու սերնդի ներկայացուցիչները, որոնք ըստ տեղական հասարակական կարծիքի, իբրև ընկերական մարդիկ, բունվելիք տեղեր ունեն:

Բայց երեւակայեցէք որ 30 տարեկան երիտասարդի և 60 տարեկան ծերունու հայեցակետների ու կարծիքների մէջ ոչ մի տարբերութիւն չկար. երկուսն էլ ափոստում էին որ մեր յեզափոխական գործունէութիւնով հայերի, մասնաւորապէս Պոլսոյ հայերի վարկը բնկաւ Սուլթանի աչքում, վաճառականութիւնը անցաւ օտարներէ ձեռքը և այլն և այլն: Այդ հիմնական փոփոխութիւն կցվում էին ի հարկէ և կոտորածների մասին եղած մեքենական ախ ու վախը, յեզափոխականների սխալները, մեծ մասամբ երեւակայական, հարուստների արշինով չարված, և մեր ապագայի անյուստութիւնը ու խորհուրդը ետ կենալ յեզափոխական գործունէութիւնից, հաշտվել Սուլթանի հետ և աշխատել հարստանալ. աւելի ճիշտը նոր ճիգեր չը թափել որ Եսայեաններ, Գիւլպէնկեաններ, Գաւրկէօզեաններ, Գիւմրիչկեր-

տանեաններ, Ստամբուլուեաններ և ուրիշ այսպիսի շատերը հանգիստ կերպով վայելեն իրենց անզգայ կեանքը, ապագային մի եկեղեցի կամ որսանոց շինելու յոյսերը տալով խեղճ հայ սպորին:

Մեր խօսակցութիւնը մի ժամից աւելի տեւեց. և այդ մի ժամվայ մէջ ինձ թվաց որ ևս զուգում եմ կամ թուրքերի, կամ թէ թուրքերից կաշառված հայերի մօտ, որոնք թուրք կայսրութեան և Սուլթանի շահերը աւելի յաւ են պաշտպանում քան Սուլթանի մի նախարարը:

Բարեբախտաբար այդ երկու սերնդի ներկայացուցիչները այնքան միամտաբար ու շերտօրէն պաշտպանեցին իրենց զբոսանի շահերը որ իսկոյն համոզվեցի թէ, ոչ թուրք են և ոչ կաշառված հայեր:

Ես անձամբ շատ վատ կարծիք եմ ունեցել հայ հարուստների մասին, ու այդ կարծիքը մի քանի անգամ խստօրէն արտայայտել եմ:

Անցեալ օրվայ սոսակցութիւնս եկաւ ինձ փաստելու որ ոչ միայն սխալված չեմ եղել, այլ ընդհակառակը դեռ շատ մեղմ կարծիք եմ յայտնել մեր հարուստների անզգայութեան և ստրկահոգութեան մասին:

Մեր հարուստների ոչ ոք և ոչ հին սերնդից օգուտ կայ հայ ազգին. եթէ այսօր նրանք վախը չունենան որ մի օր էլ Սուլթանի անխտիր բարկութիւնը իրենց գլխին կը թափի, բոլորովին չեն հետաքրքրվի հայ ժողովրդի վիճակով, ինչպէս ջէին հետաքրքրվում յեզափոխութիւնից առաջ:

ՎԱՐՈ

Ս. Խննդեան տօներու առթիւ, յառաջիկայ չորեքշաբթի օր Խորհրդում շի պիտի հրատարակուի:

ՇԱՐԼԱԴԱՆՆԵՐԸ

Ա. Հնչակեան երկու հատուածներու միութեան, և շուտով դարձեալ պատակաւորին մասին սրտած էր երկու խօսք ըսել Շարժումի մէջ: Ու ահա փութացուց ասիկա 91 թիւ Իրաւունքի ՈՒՂԻՆ ԾՇՏՆԻՔ խորագրով տխմար մարդուն խմբագրած անլի տողներովը:

Ուղին ճշդուած էր արդէն երբ պատմական ոգին ափրել սկսաւ հայ յետու մէջ. ուղին ճշդուած էր 1890 յուլիս 15ի Գուճ-Գափուէի անդրանիկ ցոյցով. կուկուռեան խմբի արշաւանքով, Ընտանիքի և վաւակաց տէր հայրեր, թողած ամէնը, թողած ստրկական կեանքը, բռնութեան դէմ կոտորել յանձն առին խիզախօրէն: Եւ սակայն չհասած իրենց նպատակին զոհուեցան, արտորակաբար մէջ հեծեցին, և կը հեծեն դեռ ուսներ:

Բայց կուկուռեանները ծնան վազգէններ, Պետոներ, Սերոբներ և այսպէս շղթայուած մէկմէկու, խիզախ յեզափոխականներ:

Հայ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆԸ այսօր ալ կը շարունակէ անվատ իր նախորդներուն արիւնով բացած փռտ ճանապարհը. և երկուսն է՛ ան երբէք չը խոտորի այս միակ փրկարար ուղիէն, մինչև հայրուս արդար ամէնատարբարան իրաւունքներու ձեռք յերուրել առանց ազդուելու դուրսէն եղած բոլոր պոռտուքներէն, որոնք կը յանձնարարեն հայ ժողովուրդը, և յեզափոխական լոկի միջիկ ընդհանուր սպասամբութեան պատրաստուելու պատրուակին սակ քնացնել ատեն մը եւս. գուցէ այնքան ատեն երբ արդէն ան կըլլայ իր մահուան ծանրքունը. չորցնելու աշխատելով յեզափոխութեան դեռւորդով զոհար ծաղիկները, անընդունակ դարձնելու կոտորելու տրամադիր եղող արդէն իսկ աննշան մասը, վերջապէս համակերպելու խոհեմ քարոզներ կարգալով շուարած հայ ժողովուրդին: Վհասեցուցիչ թուեաւոր սլաքներ արձակելով հայ յեզափոխականին ամենատեղի միջոցներով, ճեխ կեղտոտութիւն չպահելով անոր այնքան զօհողութիւնով գլուխ բերած բոլոր շարժումներուն, ամէն ձեռնարկներուն: Մինչև այն ատեն երբ Սերոբներու, Անդրանիկներու հարազատ յաջորդները ըլլալէ չենք դադրիր, խո-

տորած չպիտի ըլլանք ճշդուած ուղիէն:

Օսմանեան վայրագ բռնակալութեան տակ հեծող ստրուկ, իսկ այժմ անկախ ազգերը ազատութեան խաղաղ նաւահանգիստը հասած են, ահոյ փոթորիկներէ բռնուելով. և սակայն անոնք չեն վհատած ու իրենց մղած անընդհատ կռիւներով եւրոպական քաղաքականութեան վրայ ազդած, ու այսպէս անոնց միջամտութիւնը ստիպողական դարձուցած են:

Այս է ճշդուած, այս է նպատակաւոր, այս է ճակատագրական ուղին, ինչպէս տեսնաք որով իրենց անկախութիւնը ձեռք բերած են բոնարարուած ազգերը: Այս ուղիով նաև պիտի ընթանայ հայ յեզափոխական մինչև ցանկալի օրուան հասնիլը:

Այս միակ ուղիէն խոտորողները ըլլան անհատներ, ըլլայ ամբողջ կուսակցութիւն մը, պէտք է ընդունիլ զանոնք թուլամորթ, վհատող դասաւիթներ: Ասիկա զուտ ճշմարտութիւն է, հետեւաբար և առանց վարանելու, առանց վերապահումի, առանց խղճի խայթ զգալու, անվախօրէն պէտք է երեսնուն շարտել:

Իսկ է՛ն սեծ, և պատմական դաւաճանութիւնը դործած է կուսակցութիւն մը, հրդեհը բռնկեցնելու կայծը ինք նետելով. ու այսօր հրդեհին մէջ տապալկողներուն օգնութեան ձեռք չկարկառելով, և ջանք ընողներուն, զոհողութիւն ընողներուն ալ արգելք հանդիսանալով, անամօթաբար ջանալով ցուցնել հայ ժողովուրդին այնպիսիներուն ընթացքը ազգակործան, և միայն ուսական շահերուն համար արգիւնաւոր:

Ահա՛ ընթերցող, կրկնակ դաւաճանութիւն՝ կուսակցութեան մը կողմէ նիւթուած միայն մտքերը պղտորելու սկսուած. գործը կէս ճամբան ձգելու. անգթօրէն արեան ծովի մէջ խեղդելու մեր հաղարաւոր մայրերու, քոյրերու և եղբայրներու ճգնաժամային հառաջանքները, քար սիրտ մնալով երկրէն եկած անձնազոհ կտորիներու ձայնին, որոնք միայն զէնք կը խնդրեն իրենց արտօսած մանեան եղբայրներէ, կուսակցութիւններէն, զանոնք երկիր փոխադրելու, և բոլոր միւս անձնազոհողութիւնները յօժարակամ և բուռն փափաքով ստանձնելով: Համոզուած ըլլալով որ ժողովուրդը «զինեցի» միայն կրնայ պատրաստուիլ ընդհանրապիտանութեան, համոզուած ըլլալով որ հերոսական կռիւներ ոչ միայն վառ կրնան պահել հայ ժողովուրդի կոտորելու արամադրութիւնը, համոզ-

Բէթէրսպուրի մէջ այն ատենները կար Ձեռնիւն ի վոյնս (Ջող ու Ազատութիւն) անուանով կազմակերպութիւն մը...

(Գ) Պէտք է գիտել տալ թէ ազգայնական բարձր վիճակի չի պատասխաներ ուսու վոյնս բացատրութեան...

Թեան մէջ ազգէն զոյժ թիւն ունեցող բանին ակիթացիա վարել գեղացիներու էական պահանջներու գիտնին վրայ...

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՐՄԱՆԱՅՈՑ ԿԵՂՈՆԱԿԱՆԻ ՇՈՒՂՁ

Հիմա ալ ուրախալի փաստ է, որ պարսկահայերը զիտի ունեւան իրենց «կեղրոնական վարժարանը» միջնակարգ ծրագրով...

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՊԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ՊԱՐՏԲԸ

Գրեմանիոյ պատմութեան դժբախտ կողմն է իր սոցիալական կացութիւնը որ կը ստիպէ զինքը պահպանելու պարտաւանները...

չունի զինք ջանքատեղ լուծին պատճառաւ անկա քաղաքակրթութեան նուազ բարձր աստիճանի մը վրայ է քան երբեմն...

հետո կը բնակի մենկ, մեծազորոց բողոքներ արձակելով, մեր ձայնը թող լսելի ըլլայ մինչեւ Նըլազ Բէջոյի եւ թող մեծագոտ արձագանգ մը գտնայ...

այսպէս պիտի լինի և մեր մօտ Հապա ո՞րն է ժողովրդի մէջ լուսաւորութիւն, դատարարականութիւն տարածելու ուղղակի միջոցը...

վրայ, բայց ոչ նուազ նաեւ միծ տէրութեանց կառավարութիւններուն վրայ որոնք, 1878ի Պերլինի զաշտագրին Յէրզ յօդուածին համեմատ, յանձն առած են հսկել կարգ մը տընօրէնութեանց հաստատութիւնը...

